

ՀՀ Սյունիքի մարզպետարանը ՀՀ քաղաքացիներին տեղեկացնում է մարզպետարանում քաղաքացիական ծառայության ժամանակավոր թափուր պաշտոնը զբաղեցնելու մասին

Մարզպետարանի Կապանի սոցիալական աջակցության տարածքային գործակալության երկրորդ կարգի մասնագետի (68-4.3-24)

Կատարում է տնային այցելություններ, անհրաժեշտության դեպքում ուսումնասիրում է սոցիալական աջակցություն ստանալու նպատակով դիմած անձանց (ընտանիքների) սոցիալական և նյութական պայմանները, պարզում է սոցիալական աջակցություն ստանալու նպատակով դիմած քաղաքացիների ներկայացրած փաստաթղթերի հավաստիությունը, ներկայացնում է առաջարկություն տվյալ ընտանիքին սոցիալական աջակցություն տրամադրելու վերաբերյալ, պաշտպանում է սոցիալական աջակցություն ստացողի իրավունքներն ու օրինական շահերը, Գործակալություն դիմած քաղաքացիներին տրամադրում է անհրաժեշտ խորհրդատվություն, գործակալության պետի հանձնարարությամբ սահմանված կարգով փոփոխություններ է կատարում ընտանիքի սոցիալական անձնագրում, կազմում է նպաստի գործ, որի մեջ ամփոփվում են ներկայացված և ստացված բոլոր փաստաթղթերը (տվյալները): Իրականացնում է պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:

Նշված ժամանակավոր թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

- առնվազն միջնակարգ կրթություն.

- ունի Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, «Քաղաքացիական ծառայության մասին», «Սոցիալական աջակցության մասին», «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների և իր լիազորությունների հետ կապված իրավական այլ ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.

- համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

Աշխատավարձի չափը՝ 82.675 (ութսուներկու հազար վեց հարյուր յոթանասունհինգ) դրամ:

Տվյալ ժամանակավոր թափուր պաշտոնի հիմքի վերացման ժամկետն է՝ մինչև 27.08.2019թ.:

Վերը նշված պաշտոնը կարող են զբաղեցվել՝ տվյալ պաշտոնի անձնագրով ներկայացվող պահանջները բավարարող, հայերենին տիրապետող, 18 տարին լրացած Հայաստանի Հանրապետության քաղաքացիները:

Քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնելու առավելագույն տարիքը 65 տարին է:

Հանրային ծառայության ընդունվելու իրավունք չունի անձը, որը՝

- 1) դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ.
- 2) դատական կարգով զրկվել է հանրային ծառայության պաշտոն զբաղեցնելու իրավունքից.
- 3) տառապում է այնպիսի հիվանդությամբ, որը հանրային ծառայության տվյալ պաշտոնի նշանակվելու դեպքում կարող է խոչնդոտել իր լիազորությունների իրականացմանը.
- 4) դատապարտվել է հանցագործության համար, և դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ.
- 5) օրենքի խախտմամբ չի անցել ժամկետային պարտադիր զինվորական ծառայություն:

Դիմող ՀՀ քաղաքացիները Մարզպետարան (ք.Կապան, Նժդեհի 1) պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը

- գրավոր դիմում՝ (ձևը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս).
- կրթությունը հավաստող պետական նմուշի փաստաթղթի (փաստաթղթերի) պատճեն (պատճենները).
- աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում).
- արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճեն՝ բնօրինակի հետ միասին, կամ համապատասխան տեղեկանք.
- մեկ գունավոր լուսանկար՝ 3x4 սմ չափսի.
- անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը:

ՀՀ քաղաքացիները փաստաթղթերը հանձնում են անձամբ (ք. Կապան, Նժդեհի 1, ՀՀ Սյունիքի մարզպետարան, անձնակազմի կառավարման բաժին):

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր, ժամը 9:30-ից մինչև 12:30-ը բացի շաբաթ և կիրակի օրերից:

Լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող են զանգահարել ՀՀ Սյունիքի մարզպետարան (0285)44275 հեռախոսահամարով:

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է՝ 12/04/2019թ.:

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի
աշխատակազմի գլխավոր քարտուղար
պարոն _____

_____ -ից
դիմողի անունը, հայրանունը, ազգանունը

դիմողի հասցեն

դիմողի անձնագրի տվյալները, հեռախոսահամարը

ԴԻՄՈՒՄ

Ծանոթանալով ՀՀ Սյունիքի մարզպետարանի կողմից հրապարակված հայտարարությանը՝
խնդրում եմ Ձեզ ժամկետային աշխատանքային պայմանագրով նշանակել ինձ ՀՀ Սյունիքի
մարզպետարանի աշխատակազմի _____

_____ ժամանակավոր թափուր պաշտոնի անվանումը, ծածկագիրը

Ժամանակավոր թափուր պաշտոնում:

Հայտնում եմ, որ.

1. Համակարգչային և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն

_____ (ունեմ, չունեմ)

2. Տիրապետում եմ համակարգչային ծրագրերին (Վինդոուզ, Վոռդ, Էքսել, Աքսես և այլն)

3. Դատական կարգով անգործունակ կամ սահմանափակ գործունակ _____
(ճանաչված եմ, ճանաչված չեմ)

4. ՀՀ կառավարության որոշմամբ հաստատված հիվանդությունների ցանկում ընդգրկված
հիվանդություններից որևէ մեկով _____
(տառապում եմ, չեմ տառապում)

5. Այլ վճարովի աշխատանք (բացի գիտական, մանկավարժական, ստեղծագործական և ընտրական
հանձնաժողովի անդամի կարգավիճակից բխող աշխատանքից)

_____ (իրականացնում եմ, չեմ իրականացնում)

6. Անձամբ ձեռնարկատիրական գործունեությամբ _____
(գրադվում եմ, չեմ գրադվում)

7. Անմիջական ենթակայության կամ վերահսկողության տակ մերձավոր ազգակցական կամ
խնամիական կապերի (ծնող, ամուսին, զավակ, եղբայր, քույր, ամուսնու ծնող) մեջ

_____ (գտնվում եմ, չեմ գտնվում)

Նախազգուշացված եմ՝ կեղծ տվյալներ և փաստաթղթեր ներկայացնելու համար, ժամանակավոր
թափուր պաշտոնում նշանակվելու դեպքում զբաղեցրած պաշտոնից ազատվելու և սահմանված
կարգով պատասխանատվության ենթարկվելու մասին:

Դիմող՝ _____
ստորագրություն անուն, ազգանուն

« _____ » _____ 2019թ.